ՈՐՈՇՈՒՄ
Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

02.11.2021թ. ք. Աշտարակ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արագածոտնի և Արմավիրի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Ռ.Նամոյանս ուսումնասիրելով թիվ 06246326 և թիվ 06246328 կատարողական վարույթների նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 26.05.2020թ. տրված թիվ ԱՐԱԴ/3430/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է Երաշխավորներ Էդիկ Գևորգյանից , Արման Հարությունյանից և վարկառու Վահան Հովհաննիսյանի ժառանգությունից հօգուտ հայցվոր «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել որպես համապարտ պարտավորություն 7613 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ , սկսած 08.12.2017 թ -ից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և կուտակված տոկոսագումարի հանրագումարի նկատմամբ հաշվարկել և համապարտության կարգով բռնագանձել վարկային պայմանագրի 7.4 կետով նախատեսված 0.2 տոկոս տուժանքը:

Պարտքի գումարի բռնագանձումը տարածել հիփոթեքի թիվ 15220100717/01 պայմանագրով գրավադրված՝ ՀՀ գրավի իրավունքի հր 1910215-02-0007 վկայականում նշված գույքերի վրա :

Հօգուտ Հայցվորի Պարտապաններից բռնագանձել նաև նախապես վճարված պետական տուրքը ՝ 77840 ՀՀ դրամ , իսկ սույն վճռով հաշվեգրվելիք տուժանքի ընդհանուր գումարի 2 տոկոսը կազմող գումար որպես պետական տուրք գանձել Հայաստանի Հանրապետության պետ բյուջե , սակայն ոչ պակաս 1500 ՀՀ դրամից :

Պարտապաններից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Համաձայն «Արմէքսպերտիզա» ՍՊԸ 27.10.2021թ գրվար եզրակացության ՀՀ Արագածոտն մարզ Ապարան, Արագած Կենտրոնական խճ 8-րդ նրբ թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը կազմում է 20.920.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1,35.2,35.3,35.4 հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

Վահան Հովհաննիսյանին, Ռիմա Հովհաննիսյանին, Թերմինե Հովհաննիսյանին, Հերմինե Հովհաննիսյանին, Արկադի Հովհաննիսյանին և Ռոստամ Հովհաննիսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող և «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերությունում գրավադրված ներքոհիշյալ գույքը՝

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	Գույքի քանակը	Միավորի գնահատման գինը	Միավորի մեկնարկային գինը
1	ՀՀ Արագածոտն մարզի Ապարան, Արագած Կենտրոնական խճ 8-րդ նրբ թիվ 1 թիվ հասցեում գտնվող թիվ 1629999 սեփականության վկայականով, թիվ 02-015-076-019 ծածկագրով անշարժ գույք :	1 միավոր	20.920.000 ՀՀ դրամ	15.690.000 ՀՀ դրամ

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ http://harkadir.ajurd.am կամ www.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 21.12.2021թ.:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

« Դատական ակտերի հարկադիր կատարման մասին » ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ Ռ.ՆԱՄԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

<u>ՆԱՆՐԱԹԻՒԹԻՒՆ:</u> Յուրաքանչյուր լուտ ոարկադիր էլեկտրական աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տեղալ լուտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելուց 10 րոպե հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ հերթական աշխատանքային օրը, կայքում ղետեղվում է երկնանի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լուտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լուտի մեկնարկային գնի առաջնորդ չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպվոց վաճառվող լուտի մեննաոնային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնո տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել պարտքի կորմից լուտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուսաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լուտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լուտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը կայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հնոթում ներառված այլ գույք, իսկ նույն հնոթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերո համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լուտը չվաճառվելու դեպքում պատասխանատուները աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պատասխանատուները պահանջի դիմաց լուտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պատասխանը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լուտը/ պատասխանատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լուտի/ հանձնման նպատակությամբ հարևեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հաստատող տաստաթղթերը ներկայացնելուց հետո: